

ՆՇԽԱՐՔ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՆԱԽՆԵԱՅ

Գ Ր Ի Գ Ո Ր Ի Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ի

ՅԱՂԱԿԻՍ ԽԱՉԱՆՇԱՆ ԳԱԽԱԶԱՆԻՆ

Ջ Ո Ր Ը Ն Ծ Ա Յ Ե Ա Յ

Տ Ե Ա Ռ Ն Պ Ե Տ Ր Ո Ս Ի Հ Ա Յ Ո Յ Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Ո Ս Ի ,

ԱՍԱՅԵԱԼ ԶԽՈՐՀՈՒՐԻ ԽԱՉԻՆ .

Ընծայեմք քեզ տարեկան , նորոյ հասեալ ձեզ բարութեան ,
 Պըսակս քաղցրութեան ամիս եկեալ պարառութեան .
 Յուպ նեցուկ եւ գաւազան մական տըւեալ հաստատութեան ,
 Մոյթ յեցուկ մարդկան բոլոր ամէն ժառանգութեան .
 Նըշանակ դա յաղթութեան ծովահերձող իշխանութեան ,
 Նըհանջող գետոց յարիւն անդրանկսծախ մեռելութեան .
 Խափանիչը դիշապաց կիւսւոյ հմայից կախարդութեան ,
 Պատառիչ ջուրցըն մածեալ դիզան ալեացըն բարձրութեան .
 Պատճառ մեզ փրկութեան յեգիպտական ծառայութեան ,
 Զողաբարձ նըշանակեալ օրինակեալն Տէրունեան :
 Ոչ դափնի դա սարդենեան , այլ յարմատոյ մեզ Սաբեկան ⁽¹⁾ ,
 Ոչ կաղնին Արամազդեան , այլ Մամբրէին Աբրահամեան ,
 Ոչ նոճին Ֆահ Եսթիմեան , այլ սա ծաղկեալն Ահարօնեան ⁽²⁾ .
 Ոչ սա ոստ Ղոմբիական , այլ փոխադրող ջրոյն դառնութեան ,
 Ոչ սա տունկ է ձիթենւոյ , այլ հովուական ձեզ պետութեան ,
 Ոչ կապեալ յոստ Երակլեան , այլ գայիսոն զօրեղութեան .
 Ոչ նիզակին տունկ ձիթենւոյ , այլ մակադրեալ քառամեւեան ,
 Ոչ գործարան մահիւ , այլ իմահուն կենդանութեան ,
 Ողնափայտ սա Քսիսութեայ նոր նաւելոցս իբարութեան ,
 Սա՛ ներկեալ երկորակեան կարմրակերտիւ լուսափայլեան .
 Տրամադրեալ անտրամադրելին տառին իսա՛ ուշեղութեան ,
 Հետեւեալ յոյլ եղաբար իվայրի ջուրըս հանգըստեան ,
 Որ տանի յերկիրն ուղիղ յաւետաւորն ուրախութեան .

(1) Այլ Թրինակ . Ոչ դափնի դա Արդենեան , այլ յարմատոյ մեզ Սաբեկեան :

(2) Այլ Թրինակ . Ոչ նոճին այժմ Եսթիմեան :

Քուժ հօտիս հովանացեալ սաղարթացեալ յազատութեան ,
 Վայելէ վէժ Կեփայեան հիմըն բոլոր դու պետութեան ,
 Որոշողդ օդեաց լայծեաց բացող մեզ դրանն արքայութեան ,
 Համարձակ ծառայոս ասեմ չեմ արժանի ժառանգութեան ,
 Բայց թէ իյիս անխայես՝ չեմ սիրելի որդիութեան ,
 Այլ ասեմ զայս մաղթանօք սուրբ Հայրապետ մերս Հայութեան (*),
 Իյաւուր կացըրդական տօնի հասեալն տէրութեան ,
 Զայդ առեալ իծեռս յիշեա՛ զիս արժանի ողորմութեան ,
 Յանարիւն զենման մեծի սարսափելի գործառնութեան ,
 Եւ ըզբաժակըդ մանուածոյ ճախարակեալ մակացութեան ,
 Իմատունսդ աստուածային աջոյդ առեալ քեզ օրհնութեան ,
 Եւ զանօթ Իւղոյն սըլբոյ կարծրագունի պահպանութեան ,
 Լուսափայլ որակութեան հաղորդաբար կըցորդութեան ,
 Եւ մնասցես տէր յոգնաբուն ամօք յԱթոռդ սըրբութեան :

(*) Այլ Օրինակ . մեր ծայրութեան :

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ա Յ Օ Ս Մ Ա Ն Յ Ի Ո Յ

ՇԱՐԱԳՐԵԱԼ ՈՏԱՆԱԻՈՐԱԻ .

Զեւադրի մը մէջ անանուն ոմն զուարճալի կերպով կհամառօտէ Օսմանցի թագաւորաց պատմութիւնը , եւ կհասցունէ մինչեւ Սուլթան Մուսթաֆայ երկրորդի օրը : որով եւ կերեւի թէ աշխատասէր հեղինակը նոյն ժամանակի մարդ եղած պիտի ըլլայ : Աւելորդ կհամարիմք մէջի մէկքանի վրիպակը ուղղել . բաւական համարելով ժամանակագրական տարիները զնեւ փակագծով :

Նախնի եղեալ քաջն այն Օսման , (1299)

Այր կորովի եւ զինական .

Գրաւեաց զերկիրս տեարս եւ իշխան ,

Աւար առեալ զգեօղս եւ զաւան :

Որդի նորին կոչեալն Օրհան , (1326)

Ջնիկովիդիայն էառ համայն ,

Եւ եդ ըզգաֆն իւր ի Պրուսայն ,

Եւ կոչեցաւ Պրուսաջըֆան :

Որդի նորին Մուրատ Սուլթան , (1360)

Սոյն այս անուամբս նախ սա է խան ,

Հունքար ձայնելն աստի սկըսան ,

Եւ շատ աւուրք վայելեն այն :

Որդի նորին Պայազիտ խան , (1402)

Որ ելտրումն մակ ասացան .

Ընդ Լանկիթամուրն պատերազմեալ ,
 Եւ ինմանէ եմուտ զընտան :

Որդի նորին Մուհամմէտ խան , (1413)

Որ առաջինն էր այն անուան .

Սա յաղթութեամբ նախնեաց նըման ,

Եւ Զէլեպի եւս ասացան :

Որդի նորին քաջ Մուրատ խան , (1421)

Որ միշտ մարտեաւն ընդ Յունաստան .

Էառ ըզՊօլիսն որ Ադրիան ,

ԶՈւլուսմէլին եւ զիւր սահման :

Որդի նորին Մահամատ խան , (1452)

Սա որ երկրորդն էր սոյն անուան .

Եկեալ էառ ըզԲիւզանդիայն ,

Ինն ձ Բ թուական :